ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 10 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^2-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Մարզի համայնքներում 2012 թվականի վարչական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով

Ասատրյան Ի. - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի նախագահ

Սահակյան Ա. – մարզպետարանի աշխատակազի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Հովհաննիսյան Դ. - մարզպետարանի աշխատակազի քաղաքաշինության վարչության պետ

Թաթարյան Յու. - մարզպետարանի աշխատակազի քարտուղարության պետ

Ստեփանյան Է. -մարզպետարանի աշխատակազի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ

Մնացականյան Վ. - մարզպետարանի աշխատակազի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ

2. Հանձնաժողովին՝ վարչական վերահսկողությունն իրականացնել կառուցվածքային ստորաբաժանումների համապատասխան մասնագետների միջոցով, ուսումնասիրության արդյունքները ներկայացնել մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 8-ի <<Մարզի համայնքներում 2012 թվականի վարչական վերահսկողության իրականացման մասին>> N 10 – Ա կարգադրությունը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ